

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԲԵՍԱԿԱՆԱՑՎԱԾ ՇՈՈՒ-ՀԱՂԻՍՈՒԹՅՈՒՆ
(սոցիալ-փիլիսոփայական ասպեկտ)**

Մանուկ Հարությունյան
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Համացանցային հաղորդակցման աշխարհը՝ որպես վիրտուալ իրականություն, դառնում է ռեալ իրականության այլընտրանքը, որով մարդիկ ոչ միայն ապրում են, այլև կարող են երջանիկ զգալ, սիրել ու ատել: Մեկ անգամ «մտնելով» այդ աշխարհ, մարդիկ արագորեն ընտելանում են նրա ընձեռած հարմարավետությանն ու անվտանգությանը: Այդ վիրտուալ իրականության մեջ իսպառ բացակայում են կամ էլ հեշտությամբ հաղթահարվում են ռեալ աշխարհի հակասությունները: Վիրտուալ իրականության մեջ մարդիկ հարաբերվում են ոչ թե իրերի, այլ խորհրդանիշների հետ: Հայտնի ֆրանսիացի հետազոտող Ժ.Բոդրիյարը ժամանակակից մշակույթը համարում է նշանների մշակույթ, որը հիմնախնդիրների վերլուծությունը փոխադրում է տեղեկույթի հարթություն: Ըստ Բոդրիյարի, ժամանակակից մարդն ապրում է ոչ թե ռեալ, այլ տեղեկատվության կոդմից ստեղծված աշխարհում: Մեր ապրած աշխարհը նշանների անվերջ հոսք է և այն ամենն, ինչին բախվում ենք, առնչվում է նշանների համակարգին:¹

Ժ.Բոդրիյարը գտնում է, որ սպառման առարկաները նշանային համակարգ են, որի միջոցով «ընթերցվում» ու վերծանվում է մարդու ճաշակը, արտաքին տեսքն ու ռճը, դիրքն ու զարգացածության աստիճանը և այլն: Այդ իմաստով նշանի միջոցով որոշվում են մարդու սպառողական ճաշակը և սոցիալական հնարավորությունները: Նշանը նաև որոշակի մշակութային ռեսուրս է, որի օգնությամբ ձևավորվում է հասարակության սոցիալական աստիճանակարգը:²

Երկու դեպքերում էլ նշանները խորհրդանիշի դեր են կատարում, քանի որ, սպառելով այս կամ այն առարկան, մարդը դրանով ազդանշում է իր ով լինելը: Սպառելով այս կամ այն ապրանքը՝ դրանով իսկ մարդիկ փորձում

են իրենց մասին որոշակի տեղեկություններ հաղորդել միջավայրին: Մպատման առարկայի մեջ մարմնավորված խորհրդանիշների միջոցով մարդիկ հաղորդակցվում են միմյանց հետ: Իսկական ընդհանրությունը, սոցիալական համերաշխության հնարավորությունը նենգափոխվում է «էլեկտրոնային անիսկականությամբ, կեղծությամբ»: Օգտագործելով ֆրանսիացի ականավոր փիլիսոփա Մ.Ֆուկոյի խոսքերը՝ տեղի է ունենում ռեալ սոցիալականի «անցում, անհայտացում: Մեկ այլ ֆրանսիացի փիլիսոփա Ժ.-Ֆ.Լիոտարը գրում է. «Նոր ենթատեքստում ձգողության բոլոր նախկին կենտրոնները, որոնք կազմավորվել են ազգային պետությունների, կուսակցությունների, մասնագիտական խմբերի կողմից ... կորցնում են իրենց ուժը: Մեծ անունների, նորագույն պատմության հերոսների հետ «նույնացումը դառնում է ավելի ու ավելի պրոբլեմային»: Ինչո՞ւ և է այդպես: Որովհետև մեզանից յուրաքանչյուրը ներառված է կապերի համակարգի մեջ, որն անհամեմատ ավելի բարդ է, քան գործառույթային կապերի հարացույցը: Որն է հետաքրքրություն չեն ներկայացնում ոչ միայն սոցիալական կարգավիճակը, այլև սեռատարիքային բնութագրերը, քանի որ «երիտասարդը կամ ծերունին, տղամարդը կամ կինը, հարուստը կամ աղքատը միշտ հայտնվում են հաղորդակցական հոսքերի «հանգուցային կետերում...»:³ Մա նշանակում է, որ իրական մարդու, անհատի փոխարեն սկսում է գործել նրա համացանցային «անսեռ» տարբերակը, որը որպես իսկականին փոխարինող, նման է կլոնի կամ կլոնավորման, այն տարբերությամբ, որ մարդու «համացանցային տարբերակն» ըստ էության գոյություն չունի՝ այն գոտ խորհրդանշական կերպար է՝ նույն կերպարների համացանցային «պատկերասրահում»: Տեղին է հիշել հայ տաղանդավոր փիլիսոփա Է.Աթայանը խոսքերը. «Ամեն ինչի մասին առանց այլևայլության դատող, հոգին կենդանի ազդակներից խնամքով պահպանող, զարմանալու հատկությունն իսպառ կորցրած, շաբլոն ձևով խոսող և ոչնչով չմտածող այդ դժբախտներին, լավագույն դեպքում կարելի է խղճալ... Քաղաքակրթության՝ ամեն բան համահարթող կողմը նրանցից և նրանց ստեղծած-հայթայթած սպառողական մշակույթից արմատախիլ է անում այն ամենը, ինչ հոգեբույն է կայծկլտուն ու խաղացկուն»:⁴ Փիլիսոփայի անմիջական այս խոսքին թերևս արժեք ավելացնել բոլոր ժամանակների հանճարի՝

Շեքսպիրի խոսքերը՝ «Համլետ» ողբերգությունից: Թագավորը Լաերտին
ասում է.

Լաերտ, քո հայրը սիրելի՞ էր քեզ,
Թե՞ լոկ տրտմության նկարի պես ես,

Դեմք՝ առանց սրտի:

(IV-VII, էջ 192)

Այսօրինակ՝ «առանց սրտի»՝ օտարված իսկականից պատճենված
/օտարված/ դեմքերի, զուտ կեցվածքային և հոգեզուրկ վարքային
մշակութային դրսևորումների ականատեսն ենք այսօր մենք բոլորս:

Ֆրանսիացի փիլիսոփա և սոցիոլոգ Ժան Բոդրիյարը խոսում է իրա-
կանության (սոցիալական և այլն) անհետացման, այսպես կոչված,
«սիմուլյացիայի դարաշրջանի» մասին, երբ իրականը փոխարինվում է
իրականի նշաններով: «Միմուլյակիները», այսինքն նշանային կեր-
պարներն ամենինն էլ պարտադիր կարգով ինչ-որ բան չեն արտացոլում:
Չնայած դրան՝ նրանք ծնում են մի առանձնահատուկ թվացյալ իրա-
կանություն, որն իրականի (իրականության) «մարդակենտրոն եկվորյակն»
է: Այն օժտված է բացառիկ գրավչությամբ, հրապուրելու «առանձ-
նաշնորհներով», իր մեջ «ներքաշելու» արտասովոր ունակությամբ:⁵ Դա
վիրտուալ կամ երևութական իրականությունն է, այսինքն, ռեալ,
առարկայական, սոցիալական իրականությունից օտարված երևութական
աշխարհը, որտեղ մարդկանց միջև կենդանի հարաբերություններն
ընդունել են կերպարային, արվեստական ցուցադրական հարաբերու-
թյունների տեսք: Վիրտուալ իրականության մեջ մարդը գործ ունի ոչ թե
իրերի, այլ արտապատկերումների, կամ որ նույնն է, սիմուլյացիայի հետ:
Օրինակ, կիբերպանկերն իրենց կյանքի իմաստը տեսնում են
համակարգչային սիմուլյացիաների (պատկերումների) աշխարհում և
ինտերնետ ցանցում ինքնամոռաց «թափառելու» մեջ:

Այսպիսով, բնական մարմինների, ապրանքների «ամուր» հուսալիութ-
յունը փոխարինվում է էկրանային էֆեկտների, քլիփների և այլնի «բլիփե-
րով» կամ «բլիփմշակությամբ» (Թոֆլերի տերմինն է), նրա չափորոշիչներով,
նորաձևությամբ և վարքի կոդեքսով: Փիլիսոփայական լեզվով ասած՝ տեղի
է ունենում առարկայական-զգայական աշխարհի տեղեկատվական-էլեկ-
տրոնային «ապանյութականացում», առարկայական աշխարհի փոխարի-

նում շոու-կեցության շարժուն պատրանքայնությամբ, հեռուստատեսության և կինոյի «աստղային» մարմիններով, համակարգչային գրաֆիկայով և սարքավորումների սանդղակների ցուցանիշներով: Փոխվում-փոխակերպվում է սպառման օբյեկտների առարկայականությունը. դրանց նշանակալի մասը մարդուն շրջվում, հասնում է ոչ այնքան իր բնական գործառնությամբ, որքան սոցիալական որակներով, քանի որ նրանք հանդես են գալիս որպես հեղինակության և նորաձևության խորհրդանիշներ:

Շրջադարձը դեպի շոու-կեցությունը և, դրանով իսկ, դեպի սոցիալական աշխարհի տեղեկատվական-էլեկտրոնային «ապանության անացումը», ֆրանսիացի փիլիսոփա Գի Դեբորը մեկնաբանում է հետևյալ կերպ. հասարակական կյանքը գնալով վերածվում է առավելապես թատերականացված բեմադրության, իսկ ամհատը՝ հանդիսատեսի: Ընդ որում, այդ հանդիսատեսը դառնում է թատերականացված իրականության ոչ միայն մասնակիցը, այլև «համահեղինակը»: Նա նկատում է, որ ժամանակակից կյանքի դերուսույցները կարող են ստեղծել այնպիսի բեմականացված իրականություն, որի պայմաններում կարող է արժեզրկվել անգամ պատմական փորձով ձեռք բերված գիտելիքը:⁶ Նույնիսկ էլ հենց այն է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով ոչ միայն մարդիկ շփվում են մշակութային արժեքների հետ, այլև սկսում են գերիշխել մշակույթի վրա, այն հարմարեցնելով իրենց ցածրաճաշակ «գեղագիտությանը»: Ամեն ինչ այսօր որոշում է «սոցիալական պատվերը»՝ իսկական վեհացնող արժեքներից օտարված գոեհիկ ճաշակի տեղեկատվական մեխանիզմը: Ակամայից մոռաբերում են ռուս մեծ փիլիսոփա Ն.Բերդյաևի խոսքերը. «Մենք ապրում ենք «սոցիալական պատվերի» դարաշրջանում: Սոցիալական պատվերը որոշում է, թե ինչպիսին պետք է լինի մշակույթը, արվեստը, գրականությունը, փիլիսոփայությունը, գիտությունը, նույնիսկ կրոնը: Բացակայում է բարձր մշակույթի, հոգևոր մշակույթի, իսկական փիլիսոփայության, արվեստի նկատմամբ սոցիալական պատվերը»:⁷

Հասարակական կյանքում հանրային կարծիքին փոխարինելու է գալիս փորձագետի վարկանիշը, որ հաճախ ձեռնածուսական կեղծումների և «սրբագրումների» արդյունք է: Ընդ որում, փորձագետների հարցերի հնարավոր պատասխանները ոչ այլ ինչ են, քան իրական կարծիքի յուրօրինակ մոդելներ, որոնց կենդանության շուկա են հաղորդում հարցվողները:

Նրանք քաղաքական իմիջի մշակման կարևոր գործոններ են: Փորձագետները կարող են որոշել, թե այս կամ այն հասերային գործչի կերպարը (իմիջը) ինչպես է ազդում ընտրագանգվածի հոգեկերտվածքի և քաղաքական ընկալման վրա:

Կուսակցական օտարման նոր ձևեր են ստեղծվում, երբ պառլամենտարիզմի, բազմակուսակցականության ինստիտուտներն աստիճանաբար փոխակերպվում են խորհրդանիշային կերպարների, այն է՝ վիրտուալ իրականության: Փորձագետ-խորհրդատուների և իմիջմեյքերների ջանքերով իրական բովանդակությունը կորցրած բազմակուսակցականությունն ու պառլամենտարիզմը վերածվում են քաղաքական կերպարների մրցակցության միջավայրի: Ընդ որում, տեղեկատվական հասարակության քաղաքական-կուսակցական համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը չի վերանում-անհետանում: Այն պահպանելով հանդերձ ռեալությանը բնորոշ հատկանիշները, միաժամանակ աստիճանաբար վերածվում է վիրտուալ գործառնության միջավայրի, կերպարների կերտման ու վերարտադրության յուրօրինակ վիրտուալ «ֆաբրիկայի»:

Հասարակական կյանքի վիրտուալացման երևույթը ներթափանցում է նաև գիտության ոլորտը: Երիտասարդ գիտաշխատողն, օրինակ, ձգտում է ոչ այնքան անաչառ ճշմարտության, որքան օգտաշահ գիտելիքի, տեղեկատվության: Արդյունքում գիտելիքը հաճախ նենգավորվում է տեղեկատվությամբ՝ անմշակ գիտական «սկզբնականություն»։ Իսկ գիտականությունն օտարվում է ճշմարտությունից նրա որոնումներից: Գիտական աշխատանքի առաջնադիրը են մղվում արդյունավետության, հարմարության, շահավետության և սոցիալական վարկի չափանիշները: Գիտական բարեխղճության փոխարեն առաջնային է դառնում գիտականակերպությունը: Մտացվում է այնպես, որ ամեն ինչ կա՝ առկա են գիտականության գրեթե բոլոր ուղեկցող արտաքին հանգամանքները՝ նորահայտ տերմիններով հագեցած տեքստը, հեղինակավոր հետազոտողներից քաղված մեջբերումները, ինտելեկտուալ բնույթի խոսքային ծեծծեղումները, անմիտ, անհարկի բարդախոսությունները, ակնոցավոր ու սառը լրջությունը, բայց չկա, բացակայում է ամենակարևորը՝ ճշմարիտ գիտականությունը և հետազոտական անկեղծ ավյունը: Նման գիտականակերպությունները տխուր գուգորդություններ են առաջացնում և հիշեցնում Հովհ. Թու-

մանյանի «Գիքոր» պատմվածքի Համբոյի, որը որդուն կորցնելուց հետո, տունդարձի ճանապարհին, եայելով սարերին ու կանգ առնելով աղբյուրների մոտ, խորհում է վշտամոլոր, թե «ամեն ամենը կան, միայն ես չկա», այսինքն՝ չկա ամենահարազատը, ամենասիրելին՝ իր որդին: Վերոնշյալ գիտականակերպ գործերում էլ պակասում է հենց ամենատեսչալիս ու էականը՝ ճշմարիտ միտքը, որը օտարվում է, կարելի է ասել՝ նույնիսկ վտարվում է մարդուց ու հասարակայնությունից:

Մենք ապրում ենք կերպարների գիտության և գիտության կերպարի դարաշրջանում:⁸ Մեր վարքում, մեր գործերում և գիտափոխության կան աշխատանքներում գերիշխում են ցուցադրականությունը. փոխանակ մտածելու՝ մենք կատարում ենք մտածելու ժեստ՝ մեր մատը դնում ենք մեր քունքի վրա և ընդունում լրջախոհ մտածողի տեսք՝ ի ցույց շրջապատի և նույնիսկ ի ցույց ինքներս մեզ...

Նույն երևույթը ակնառու է նաև փոխափայտության մեջ, երբ իսկական, խորհրդածող իմաստասիրությունն օտարվում է ճշմարտության, կյանքի իմաստի, արժեմշակութային անցանկալի փոխակերպումների մասին լուրջ մտորումներից:

Ծանցային հասարակությանը բնորոշ է նաև տեղեկատվության ստացման ապագանգվածայնացումը, որը բարդ ազդեցություն է գործում մարդկանց անհատական և սոցիալական հոգեբանության վրա: Այդ ազդեցության դրսևորումներից է «ջոյներների» (to join – միավորվել) ի հայտ գալը: Դա նրանք են, ովքեր, ըստ ամերիկյան հետազոտողների դիտարկումների, չեն ցանկանում մնալ «միջին ամերիկացիների» կարգավիճակում, ովքեր ձգտում են մասնակցել ամենատարբեր կամավորական կազմակերպությունների ու միությունների գործունեությանը: Դրանց թվաքանակի աճը կապվում է սոցիալականության իրավիճակի փոփոխության հետ: Մկսել են ձևավորվել հանրակցություններ՝ մարդկային շահերի, սպառողական նախասիրությունների ընդհանրության հիման վրա: Այսպիսով, հեռահաղորդակցային տեխնոլոգիաների և համակարգիչների կողմից հարուցված փոփոխությունները նշանակալիորեն նպաստում են հասարակության փոխկապվածությանը, որի անդամներն անընդհատ գտնվում են սերտ հեռահաղորդակցական կապերի մեջ՝ փոխադար-

ձախար մասնակցելով առավել լարված սոցիալ-քաղաքական իրադարձություններին:

Ազգային-պետական սահմաններից դուրս՝ տարբեր կողմերում ձևավորվում են նոր հանրություններ, այսպես կոչված, «ցանցային ազգեր»՝ միավորված կրոնամշակութային, քաղաքական, մասնագիտական ընդհանուր շահերով: Ցանցային ազգերի կենսագործունեության հիմքը կազմում են արխիվները, նորությունները, ինտերակտիվությունը, իրադարձությունները, ծառայությունները և այլն: Դրանց գործառնությունը իրականացվում է տեղեկատվական հոսքերի միջոցով, որոնք տեղեկությունները հավաքում, միատեղում և համակցում են՝ նպաստելով գիտելիքների ձևավորմանն ու պահպանմանը:

«Ցանցային ազգերը» կոչված են նաև վտանգագերծել տեղեկատվական գերծանրաբեռնվածությունից առաջացած սպառնալիքներն ու խնդիրները: Ցանցային կամ ցանցավորված ազգը կոչված է ապահովել տեղեկության կուտակման, դասակարգման ու արժեքավորման բարձր մակարդակ: Ցանցային ազգերի առանձնահատուկ պահանջմունքները (ապրանքների ու ծառայությունների վերաբերյալ) ձևավորում են նորանոր առաջարկներ, որոշում են ընդհանուր միջոցառումների անցկացման օրացույցը: Այդ գործունեությունը համահունչ է ապահովագրական ընկերությունների գործունեությանը. մարդկային անհատը մշտապես ձգտում է պահպանել ու ամրապնդել իր միջավայրի (ներառյալ՝ տեղակատվության) անվտանգությունը:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ ցանցային հանրությունների, ավելի ստույգ՝ հանրությունների անդամները կարող են իրար հետ անձնապես ծանոթ չլինել, սակայն դեպքերի բերումով նրանք ներառնված են ձևավորվող տեղեկատվական հասարակության սոցիալական խոր հակասությունների մեջ:

Այդօրինակ միավորումների աճի նկատմամբ վերաբերմունքը տարբեր է՝ ոմանք այդ միտումը ողջունում են, ոմանք էլ՝ դատապարտում: Ժամանակակից պայմաններում ցանցավորման տարածումը, այսինքն՝ «ապագանգվածայնացումը» հանգեցնում է ոչ թե հասարակության հետագա «տրոհմանը», այլ սոցիալական սուբյեկտների դերակատարության աճին՝ նշյալ «կամավոր միավորումներում»:

ՀՊՈՒՆԵՐ

1. Бодрийяр Ж. Символический обмен и смерть. М., Дубровский, 2000.
2. Бодрийяр Ж. Америка. – М., СПб, Изд-во Владимир Даль, 2000, с.16.
3. Лиотар Ж.-Ф. Постмодернистское состояние: доклад о знании. – Философия эпохи постмодерна. – Минск, 1996, с.145.
4. Արայան Է. Հայեր և Հայր: Վերացական և քանձրացական ազգային յիշատակ: Արայան Է. Հոգի և ազատություն: Հոգիացներ և քարզանություններ, Երևան, Սարգիս Խաչեկ, 2005, էջ 195.
5. Бодрийяр Ж. Симулякры и симуляции. – Философия эпохи постмодерна. – Минск, 1996, с. 34-35
6. Дебор Г. Общество спектакля. – М., ЛОГОС, 1999, с.158.
7. Бердяев Н.А. Судьба человека в современном мире. – "Философия свободного духа", М., 1994, с 356.
8. Иванов Д. Виртуализация общества. СПб., "Петербургское востоковедение", Санкт-Петербург, 2000.